Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. մայիսի 11-ի թիվ 148-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բովանդակություն

Ներածական մաս 3 էջ

Ամփոփագիր 4 էջ

Հաշվեքննության օբյեկտի
ֆինանսական ցուցանիշները 5 - 7 էջեր

Հաշվեքննության օբյեկտի
արդյունքային (կատարողական) ցուցանիշները 7 - 8 էջեր

Անհամապատասխանությունների և խեղաթյուրումների կամ դրանց
բացակայության վերաբերյալ գրառումներ 8 -12 էջեր

Արձանագրված այլ փաստեր 12 էջ

Հետհսկողական գործընթաց 12 էջ

Առաջարկություններ 13 էջ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի փետրվարի 10-ի թիվ 25-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն:
Հաշվեքննության առարկան	2020 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Աշխատանքային օրենսգիրք», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, պետական գնման պայմանագրեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	Նախատեսված էր 2021 թվականի փետրվարի 16-ից մինչև ապրիլի 15-ը: Հաշվեքննության կատարման ժամկետը ՀՀ հաշվեքննիչ պալատի թիվ 102-Ա որոշմամբ երկարաձգվել է մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանություններին, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի» համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը :
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ինն երորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2020 թվականի ինն ամիսների հաշվեքննությամբ արձանագրվել էր, որ «Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր» միջոցառման շրջանակում «այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով՝ 3,686.5 հազ. դրամ նախորդ տարիներից փոխանցված դեբիտորական պարտքից 2020 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ մարվել էր 2,848.5 հազ. դրամ, և 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ դեբիտորական պարտքը կազմել է 838.0 հազ. դրամ: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ նշված միջոցառման շրջանակում դեբիտորական պարտքը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մարվել է:

Արձանագրվել է նաև, որ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մարվել է «Ազգային անվտանգության համակարգի տրանսպորտային սարքավորումների հագեցվածության բարելավում» միջոցառման «տրանսպորտային սարքավորումներ» հոդվածով 62,900.0 հազ. դրամի կրեդիտորական պարտքը:

Հաշվեքննության իրականացման համար ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ներկայացված 2020 թվականի ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների ցուցանիշները համադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի գործունեության էլեկտրոնային համակարգի LS Finans և LS Rep ծրագրերի տվյալների, ինչպես նաև առանձին հոդվածներով ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ, խեղաթյուրումներ և անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2020 թվականի համար ՀՀ ազգային անվտանգության ծառայության պետական բյուջեի «Ազգային անվտանգություն» ծրագրով ճշտված պլանը կազմել է 31,139,350.7 հազ. դրամ, ֆինանսավորվել է 30,908,891.6 հազ. դրամ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2020 թվականի ֆինանսավորումը պետական բյուջեի «Ազգային անվտանգություն» ծրագրի միջոցառումներով

հազ. դրամ

Ծրագրային միջոցառում	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում	23,262,350.0	23,086,442.3	22,947,736.4	22,739,039.8
Ազգային անվտանգության համակարգի ստորաբաժանումների համար դեղորայքի ձեռքբերում	26,793.2	20,847.1	20,847.1	20,450.4
ՀՀ տարածքում երկաթուղով իրականացվող միջպետական ռազմական փոխադրումների, երկաթուղային կայարաններում կատարվող սպասարկման ծառայություններ	14,000.0	5,309.6	5,309.6	5,309.6
Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր	7,326,303.8	7,326,303.8	7,326,303.8	7,329,990.3
Ազգային անվտանգության համակարգի տեխնիկական հագեցվածության բարելավում	188,240.0	183,635.2	183,635.2	201,635.2
Ազգային անվտանգության համակարգի շենքային ապահովվածության բարելավում	187,526.7	152,443.7	152,443.7	162,385.7
Ազգային անվտանգության համակարգի տրանսպորտային սարքավորումների հագեցվածության բարելավում	124,770.0	124,550.0	124,550.0	124,550.0
Ազգային անվտանգության համակարգի կողմից ծառայությունների մատուցման ապահովման համար ոչ նյութական հիմնական միջոցների ձեռքբերում	9,367.0	9,359.9	9,359.9	9,359.9
Ընդամենը	31,139,350.7	30,908,891.6	30,770,185.9	30,592,720.9

«Ազգային անվտանգություն» ծրագրով 2020 թվականի ճշտված պլանի նկատմամբ ֆինանսավորումը կատարվել է 99.3 %-ով, դրամարկղային ծախսը կազմել է 30,770,185.9 հազ. դրամ կամ ճշտված պլանը կատարվել է 98.8 %-ով: Ծրագրի միջոցառումները ութն են.

- «Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում» միջոցառման կատարման համար ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 23,262,350.0 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 23,086,442.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 99.2 %-ը, դրամարկղային ծախսը՝ 22,947,736.4 հազ. դրամ կամ ճշտված պլանի 98.6 %-ը:
- «Ազգային անվտանգության համակարգի ստորաբաժանումների համար դեղորայքի ձեռքբերում» միջոցառման կատարման համար ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 26,793.2 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 20,847.1 հազ. դրամ կամ ճշտված պլանի 77.8 %-ը:
- «ՀՀ տարածքում երկաթուղով իրականացվող միջպետական ռազմական փոխադրումների, երկաթուղային կայարաններում կատարվող սպասարկման ծառայություններ» միջոցառման կատարման համար ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 14,000.0 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 5,309.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 37.9 %-ը:
- «Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր» միջոցառման կատարման համար ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 7,326,303.8 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել է 100 %-ով:
- «Ազգային անվտանգության համակարգի տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառման կատարման համար 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 188,240.0 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 183,635.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 97.6 %-ը:
- «Ազգային անվտանգության համակարգի շենքային ապահովվածության բարելավում» միջոցառման կատարման համար 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 187,526.7 հազ.դրամ, ֆինանսավորումը և

դրամարկղային ծախսը կազմել են 152,443.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 81.3 %-ը:

- «Ազգային անվտանգության համակարգի տրանսպորտային սարքավորումների հագեցվածության բարելավում» միջոցառման կատարման համար 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 124,770.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 124,550.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 99.8 %-ը:
- «Ազգային անվտանգության համակարգի կողմից ծառայությունների մատուցման ապահովման համար ոչ նյութական հիմնական միջոցների ձեռք բերում» միջոցառման կատարման համար 2020 թվականի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 9,367.0 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 9,359.9 հազ. դրամ կամ ճշտված պլանի 99.9 %-ը:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2020 թվականի միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը: ՀՀ ազգային անվտանգության ծառայության բյուջետային ծրագրով նախատեսված միջոցառումների արդյունքային ցուցանիշները հիմնականում նկարագրում են ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացված միջոցառումների քանակական բնույթի ցուցանիշները: Ընդ որում, «Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում», «ՀՀ տարածքում երկաթուղով իրականացվող միջպետական ռազմական փոխադրումների, երկաթուղային կայարաններում կատարվող սպասարկման ծառայություններ» և

«Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր» միջոցառումների համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2020 թվականի տարեկան արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ հաշվետվության արդյունքի չափորոշիչները ներկայացված են հավելված 1-ում:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ հաշվեքննիչ պալատի «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցով ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2020 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության նվազագույն ծածկույթ է նախատեսվել 18,145,710.3 հազ. դրամ, որը ապահովելու համար հաշվեքննության են ենթարկվել պետական բյուջեի «Ազգային անվտանգություն» ծրագրի միջոցառումներով կատարված հետևյալ ծախսերը՝

1. «Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում» միջոցառման շրջանակում աշխատողների աշխատավարձերի և հավելավճարների ծախսեր՝ 15,739,245.7 հազ. դրամ,
2. «Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր» միջոցառման շրջանակում կատարված ծախս՝ 7,326,303.8 հազ. դրամ,
3. «Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում» միջոցառման շրջանակում ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից կնքված 16 պայմանագրեր, որոնցով 2020 թվականին կատարված ծախսերը կազմել են 659,282.9 հազ. դրամ:

Ընդհանուր առմամբ, հաշվեքննության են ենթարկվել ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից 2020 թվականին կատարված 23,724,832.4 հազ. դրամի ծախսերը:

Հաշվեքննության ընթացքում կատարվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատողների աշխատավարձերի և հավելավճարների հաշվարկի և վճարման ճշտության ընտրանքային ուսումնասիրություն: ՀՀ ազգային անվտանգության ծառայության «Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում» բյուջետային ծրագրային միջոցառումով հատկացված միջոցներով վարձատրվող աշխատողների հաստիքացուցակից համակարգչային Excel ծրագրի միջոցով կատարվել է 73 աշխատողների պատահական ընտրություն ընդհանուր թվակազմից՝ ըստ պաշտոնների յուրաքանչյուր խմբի: Ընդ որում, ընտրության արդյունքները ճշգրտվել են այնպես, որ յուրաքանչյուր պաշտոնների խմբից ընտրվի առնվազն մեկ աշխատող (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ ազգային անվտանգության աշխատողների համակարգչային Excel ծրագրի միջոցով պատահական ընտրություն

Պաշտոնների խումբ	Միջոցառում 1	
	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ
Գլխավոր խումբ	0	1
Ավագ խումբ	12	12
Միջին խումբ	23	23
Կրտսեր խումբ	26	26
Պայմանագրային զինծառայողներ	7	7
Զինվորական կոչում չունեցող	4	4
Ընդամենը	72	73

Ընտրված աշխատողների հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների աշխատավարձերի ցուցակների ուսումնասիրությունից պարզվել է, որ բոլոր ընտրված աշխատողների աշխատավարձերը և հավելավճարները

հաշվարկվել և վճարվել են օրենսդրության պահանջներին համապատասխան:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2020 թվականի ինն ամիսների հաշվեքննությամբ արձանագրվել էր, որ «Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր» միջոցառման շրջանակում «այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով՝ 3,686.5 հազ. դրամ նախորդ տարիներից փոխանցված դեբիտորական պարտքից 2020 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ մարվել էր 2,848.5 հազ. դրամ, և 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ դեբիտորական պարտքը կազմել է 838.0 հազ. դրամ: Հաշվեքննությամբ պարզվել է, որ նշված միջոցառման շրջանակում դեբիտորական պարտքը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մարվել է:

Արձանագրվել է նաև, որ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մարվել է «Ազգային անվտանգության համակարգի տրանսպորտային սարքավորումների հագեցվածության բարելավում» միջոցառման «տրանսպորտային սարքավորումներ» հոդվածով ավտոմեքենաների մատակարարման ընթացքում առաջացած 62,900.0 հազ. դրամի կրեդիտորական պարտքը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության «Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում» միջոցառման հաշվեքննության ենթարկված պայմանագրերը ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Հաշվեքննության ենթարկված ՀՀ ազգային անվտանգության ծառայության պայմանագրեր

հազ. դրամ

Կատարող	Պայմանագրի համար	Պայմանագրի գումար	2020 թվականի վճարում
Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում			
«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԲՄԱՊՁԲ-20/1-ՎԱՌԵԼԻՔ/1	440,343.8	440,343.8
«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/1	19,655.1	19,592.6

«Լենտեքս» ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2	1,687.5	1,687.5
«Կոտայքկոշ» ԲԲԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/3	2,563.2	2,563.2
«Գդակ» ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/4	7,377.8	7,377.8
Ա/Ձ Վերգինե Մուրադյան	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/5	372.0	372.0
«Գառու Գրուպ» ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/6	6,700.0	6,700.0
«Գլորիա Եղբայրներ» ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/7	5,149.0	5,149.0
Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/8	17,111.6	17,111.6
«Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/9	1,529.3	1,529.3
«ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/10	17,782.2	17,764.4
«ԱԲԻ» ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/11	22,686.9	22,686.9
«ԱԲԻ» ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/1	10,718.4	10,718.4
«Գառու Գրուպ» ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2	44,849.2	44,849.2
Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/3	44,048.7	44,048.7
«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/4	16,798.5	16,788.5
Ընդամենը		**659,373.2**	**659,282.9**

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը բաց մրցույթի արդյունքում 1,100,000 լիտր ռեգուլյար բենզինի և 275,000 լիտր դիզելային վառելիքի գնման համար 2019 թվականի դեկտեմբերի 30-ին «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ հետ կնքել է թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԲՄԱՊՁԲ-20/1-ՎԱՌԵԼԻՔ/1 պայմանագիր՝ 480,375.0 հազ. դրամ արժեքով: 2020 թվականի ընթացքում պայմանավորված վառելիքի գնի տատանումներով վեց համաձայնագրերով այդ քանակի ռեգուլյար բենզինի և դիզելային վառելիքի համար ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը վճարել է մատակարարին 440,343.8 հազ. դրամ: Տարվա ընթացքում բենզինի խմբաքանակները գնվել են 1 լիտրը 290 դրամից մինչև 380 դրամ գնով (1 լիտրի միջին գինը կազմել է 316.3 դրամ), դիզելային վառելիքը՝ 320 դրամից մինչև 385 դրամ գնով (1 լիտրի միջին գինը կազմել է 336.3 դրամ):

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը երկու գնանշման հարցման արդյունքում 2020 թվականին հանդերձանքի գնման համար մատակարար կազմակերպությունների հետ կնքել է 15 պայմանագրեր՝ ընդամենը՝ 219,029.4 հազ. դրամ արժեքով: Հաշվեքննությամբ պարզվել է, որ նախատեսված հանդերձանքը մատակարար կազմակերպությունների կողմից մատակարարվել է ամբողջությամբ և սահմանված ժամկետներում: Բացառություն են կազմել «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ և «Պահապան» ՍՊԸ, որոնք հանդերձանքի առանձին խմբաքանակների մատակարարումը կատարել են

սահմանված ժամկետների խախտումներով, որի համար հաշվարկվել և պետական բյուջե է գանձվել ուշացված օրերի տույժ համապատասխանաբար՝ 72.5 հազ. դրամ և 17.8 հազ. դրամ:

Հաշվեքննության իրականացման համար ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ներկայացված 2020 թվականի ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների ցուցանիշները համադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի գործունեության էլեկտրոնային համակարգի LS Finans և LS Rep ծրագրերի տվյալների, ինչպես նաև առանձին հոդվածներով ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ, խեղաթյուրումներ և անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

Հաշվեքննության իրականացման համար պահանջված տեղեկատվությունը ներկայացվել է ամբողջությամբ և սահմանված ժամկետներում:

Հաշվեքննվող օբյեկտի ղեկավարությունը ծանոթացել է հաշվեքննության արդյունքներով կազմված արձանագրությանը, առարկություններ և բացատրություններ չունի:

ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2020 թվականի պետական բյուջեի կատարման նկատմամբ նախորդ հաշվեքննությունների արդյունքում ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացվել է հետևյալ առաջարկությունը.

ձեռնարկել միջոցներ «Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր» միջոցառման նախորդ տարուց փոխանցված դեբիտորական պարտքը, ինչպես նաև 2020 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում առաջացած կրեդիտորական պարտքերը մարելու ուղղությամբ:	ընդունված է	կատարված է

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝

– ծրագրային բյուջետավորման շրջանակներում ուսումնասիրել «Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում», «ՀՀ տարածքում երկաթուղով իրականացվող միջպետական ռազմական փոխադրումների, երկաթուղային կայարաններում կատարվող սպասարկման ծառայություններ» և «Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր» միջոցառումների համար արդյունքի չափորոշիչներ սահմանելու անհրաժեշտությունը:

Հավելված 1

ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2020 թվականի արդյունքի չափորոշիչները

Արդյունքի չափորոշիչներ	Պլանային ճշտված ցուցանիշ	Փաստացի ցուցանիշ	Ճշտված պլանի/ փաստացի ցուցանիշների տարբերություն	Տարբերության պատճառը
Ազգային անվտանգության համակարգի ստորաբաժանումների համար դեղորայքի ձեռքբերում				
Ձեռք բերված դեղերի անվանատեսակ, քանակ	325	324	1	Մատակարարվող ապրանքի որակի հետ կապված մեկ պայմանագրի լուծարում ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից:
Ազգային անվտանգության համակարգի տեխնիկական հագեցվածության բարելավում				
Համակարգչային սարքավորումների քանակ,	285	285	0	
Գրասենյակային գույքի միավոր քանակ, հատ	320	320	0	
Այլ սարքավորումների քանակ, հատ	30	30	0	
Համակարգչային սարքավորումների ծառայության կանխատեսվող միջին ժամկետ,	5	5	0	
Ազգային անվտանգության համակարգի ստորաբաժանումների վարչական շենքերի կառուցում, կապիտալ վերանորոգում, շինարարական և կապիտալ նորոգման օբյեկտների նախագծահետազոտական փաստաթղթերի պատրաստում				
Կառուցվող շենքերի և շինությունների ընդհանուր մակերես, ք.մ.	1567.1	1273.9	293.2	Պատերազմական իրավիճակից ելնելով շինարարական աշխատանքները դադարեցվել են:
Ազգային անվտանգության համակարգի շենքային պայմանների բարելավում				
Տրանսպորտային սարքավորումների քանակ,	19	19	0	
Ազգային անվտանգության համակարգի կողմից ծառայությունների մատուցման ապահովման համար ոչ նյութական հիմնական միջոցների ձեռբերում				
Ձեռքբերվող լիցենզիաների թիվ, հատ	4	4	0	
Ոչ նյութական հիմնական միջոցների օգտագործման կանխատեսվող ժամկետ, տարի	1	1	0	